Հայոց պատրիարքի միջնորդութեան համաձայն, վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 12 յունիսի, թ. 853։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ քննութեան առնելով Մեղրի գիւղի Գէորգ քհյ. Տէր Դաւթեանի մեղադրական գործը չհաս պսակներ կատարելու, կաշառակերութեան և այլ յանցանքների մէջ, որոշեց. վաւերական ճանաչել, համաձայն Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի 1902 թ. յունուարի 4-ի, № 4 կոնդակի, Գէորգ քհյ. Տէր Դաւթեանի կատարած պսակները, բացառութեամբ Շմաւոն Բագալեանի և Արեգնազան Երեմեանի պսակի, որը համարել անվաւեր. ապա՝ ի նկատի ունենալով յիշեալ քահանայի բազմաթիւ անկանոնութիւններն ու կանոնադանցութիւնները, հաստատել կոնսիստորիայի վճիռը և կարգալոյծ անել յիշեալ Գէորգ քհյ. Տէր Դաւթեանին։ 36 մայիսի, թ. 231։

Սինօդը՝ քննութեան առնելով Երևանի գաւառի Իմանշալու գիւղի Վաղարշակ քհնյ. Տէր-Ղազարեանի մեղադրական գործը խոովարար և ըմբոստ ընթացք ունենալու համար, որոշեց. դադարեցնել յիշեալ քահանային վեց ամիս ժամանակով քահանայագործութիւնից և ուղարկել Կարմիր վանքն ապաշխարելու։ Անկախ սորանից բացատրել Երևանի Կոնսիստորիային, որ բոլոր դատաստանական հաստատութեանց համար սահմանուած կարգի համաձայն կոնսիստորիան քահանաներին պատասխանատուութեան ենթարկելիս պէտք է իւր վճիռը յայտնէ մեղադրեալին և դժգոհելու դէպքում բողոքը ուղարկել Սինօդիս, և որ այդ հանգամանքն ամենևին չի նուազեցնում կոնսիստորիայի հեղինակութիւնը ստորադրեալ պաշտօնեաների առաջ։ 6 յունիսի, թ. 296։

Սինօդը՝ քննութեան առնելով Լորուտ, Շամուտ և Աթան գիւղացիների խնդիրը՝ 1912 թ. դեկտեմբ. 20-ի

օրէնքի համաձայն իրենց ձեռքին գտնուած հողերը նրանց վաճառելու վերաբերմամբ, որոշեց. ի նկատի ունենալով, որ յիշեալ գիւղացիները ս. Էջմիածնի հողերում ապրում են ոչ որպէս նստդելատէրեր, այլ իբրև կապալառուներ, հետևապես հողերի յետգնման (выкупъ) օրէնքին չեն ենթարկուում, պատուիրել Մ. Աթոռի կալուածների կառավարչին այսուհետև ևս նրանց հետ պայման կապել հողերից օգտուելու համար, նախապէս այդ մասին տեղեկանալով Սինոդի հաւանութիւնը։ 6 յունիսի, թ. 250։

Սինոդը՝ համաձայն անցած մայիսի 2-ի անուանական Բարձրագոյն Հրամանի որոշեց. նախ՝ ճանաչել Տ. Կարապետ եպիսկոպոսին Շամախու Հայոց թեմի առաջնորդ, սահմանելով նրան, ըստ նախահաշուի, տարեկան 2400 ռ. ռոճիկ և ճանապարհածախս սահմանուած չափով, պատուիրել գնալ պաշտօնատեղին՝ Շամախի, և երկրորդ, արձակուած համարել Տ. Անանիա արքեպիսկոպոսին Շամախու թեմի առաջնորդական պաշտօնից, պատուիրելով նրան վերադառնալ ս. Էջմիածին։ 6 յունիսի, թ. 261։

Սինոդը՝ քննութեան առնելով Խանքենդ աւանի Պետրոս քհնյ. Տէր-Յովհաննիսեանի փոխարէն նոր քահանայ ձեռնադրելու գործը, որոշեց. ի նկատի ունենալով, որ ընծայացու Աստուածատուր Ադամեանը տարկաւագ է ձեռնադրուած Մուշկապատ գիւղի վրայ, թողնել նորա խնդիրը՝ Խանքենդում քհնյ. ձեռնադրուելու վերաբերմամբ առանց հետևանքի. Խանքենդի Պետրոս քհնյ. Տէր-Յովհաննիսեանին, որ Ղարաբաղի կոնսիստորիայի կարգադրութեամբ տեղափոխուած է Շուշի, անմիջապէս վերադարձնել նախկին պաշտօնավայրը—Խանքենդ, իսկ Շուշու վերին թաղի համար պատուիրել կոնսիստորիային ընտրել տալ նոր քահանայացու։ 9 յունիսի, թ. 264։

Սինոդը՝ քննութեան առնելով Բագուի նախկին գործակալ տ. Արտակ վարդապետից մեարիքական քաղուածների համար ստացած 2-ական ռուբլիները—ընդամենը

940 ռ. գումարը յետ պահանջելու վերաբերեալ գործը, որոշեց. նախ ի նկատի ունենալով, որ այդ ձևի վարձատրութիւնը քաղուածների համար ստացել են բոլոր գործակալները, և կոնսիստորիան նրանցից ոչ մէկից չի պահանջել ստացած գումարները, անպահանջ թողնել նաև Արտակ վարդապետի ստացածը։ Երկրորդ. որովհետև քաղուածների նախկին ձևի տուչութիւնից տուժում են վիճակային ատեանները, պատուիրել գործակալներին այսուհետև քաղուածներ տալ միայն ընթացիկ տարուայ չափաբերականներից։ 9 յունիսի, թ. 265։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութիւնը Ամարասի նախկին վանահայր հանգ. Վահան ծ. վարդապետի թողած 3900 ռ. գումարից 2400 ռուբլով վանքին կից դպրոց շինելու և այլ կարևոր նորոգութիւններ անելու մասին, որոշեց. պատուիրել նոյն կոնսիստորիային ուղարկել Սինոդ յիշեալ 3400 ռ. գումարը և ներկայացնել մանրամասն նախահաշիւ Ամարասում շինուելիք դպրոցի, վերանորոգութեան և այլ ծախքերի համար։ 11 յունիսի, թ. 270։

Սինոդը՝ քննութեան առնելով Թէոդոսիայի Արշաւիր քհնյ. Վարդանեանի տեղափոխութեան գործը, որոշեց. ի նկատի ունենալով, որ Սինոդը 1913 թ. սեպտեմբ. 23-ին որոշել է Արշաւիր քահանային հեռացնել Թէոդոսիայից, անհետևանք թողնել նրան Թէոդոսիայում պահելու համար արած բոլոր խնդիրները՝ ինչպէս և քահանայի բողոքը կոնսիստորիայի դէմ՝ նոր քահանայի ընտրութիւն նշանակելու վերաբերմամբ. առաջադրել Բեսսարաբիայի կոնսիստորիային, նախ, ձեռնարկել Թէոդոսիայի նոր քահանայացուի ընտրութեան գործին, առաջարկելով Արշաւիր քահանային տեղ գտնել իրեն համար և, երկրորդ, կարգադրել յիշեալ քահանայի ռոճկի խնդիրը՝ համաձայն համախոսական վճռի։ 11 յունիսի, թ. 271։

Սինոդը՝ լսելով և քննութեան առնելով Թէոդոսիայի նոր երեցփոխանի ընտրութեան դէմ եղած բողոքները,

որոշեց. լսելով կոնսիստորիայի բացատրութիւնը, անհետևանք թողնել նոր երեցփոխանի ընտրութեան վերաբերեալ ծխականների որոշումը, քանի որ գործից չի երևում, թէ ժողովը եղել է երկրորդը և օրինական. անկանոն ճանաչել նորընտիր երեցփոխ պ. Զեվէլեկեանի կատարած գործողութիւնները, հաստատուած չլինելու պատճառով. պատուիրել հին երեցփոխ Քէշիշեանին եկեղեցու վերաբերեալ բոլոր ծախքերը վճարել, որոց թւում և քահանայի ռոճիկը. և պատուիրել կոնսիստորիային ձեռնարկել նոր երեցփոխի ընտրութեան, անմիջապէս քննել տալով Քէշիշեանի հաշիւները։ 11 յունիսի, թ. 272։

Սինոդը, ի փոփոխումն իւր 1908 թ. նոյեմբ. 10-ի օրագրական վճռի, որոշեց. ի նկատի ունենալով, որ Հաղարծնի վանքի եկամուտները հասնում են տարեկան 500 ռուբլու և բաւական են վանահօր ապրուստի համար, կարճել այսուհետև վանահայր Ստեփան վրդ. Քոլեանի ամսական 30 ռ. ռոճիկը, որ նա ստանում էր Տաթևի վանքից, որպէս միաբան նոյն վանքի, իսկ մինչև այժմ չստացած ռոճիկները հատուցանել նրան Տաթևի Հոգ. Կառավարութեան միջոցներից։ 11 յունիսի, թ. 274։

Սինոդը՝ լսելով Ամարասի վանքի վանահօր յայտարարութիւնը վանքի քայքայուած տնտեսութիւնը բարելաւելու մասին և նրա բողոքը Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչից և կոնսիստորիայից դէպի վանքի վիճակն ունեցած անտարբերութեան համար, որոշեց. ի նկատի ունենալով թեմի ժամ. կառավարիչ տ. Զաւէն վարդապետի բացատրութիւնը Ամարասի վանահօր բողոքի հանդէպ, այդ խնդիրը փակուած համարել։ Սակայն ի նկատի ունենալով, որ Ամարասի կալուածական և տնտեսական վիճակն իրօք կարօտ է կարգաւորման, պատուիրել Ղարաբաղի թեմի փաստաբանին գնալ Ամարաս և առաջնորդաւն ծանօթանալով կալուածների արդի վիճակին, սկսել անհրաժեշտ դատեր կալուածները պաշտպանելու համար։ 13 յունիսի, թ. 279։

Սինոդը՝ Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, թոյլ տուեց նոյն կոնսիստորիային կարգադրել մկրտել հայ եկեղեցու ծիսով Խարկովի վերաբնակիչ հրէուհի Էլկա Մերսոնին, հակելով որ պահպանուեն XI հտ. I մ. 7 յօդ. յաւելուածով սահմանուած կարգերը։ 13 յունիսի, թ. 280։

Սինոդը՝ քննութեան առնելով Արդուինի Յովհաննէս քահանայ. Եսայեանի մեղադրական գործը, որոշեց. ի նկատի ունենալով, որ Արդուինի Յովհաննէս քահանան տարիներ շարունակ նկատուել է իւր քահանայական կոչման անվայել ընթացքի մէջ, յաճախ վրդովել է ծխական համայնքը, որի համար նա մի կատարեալ չարիք է եղել, պատճառ դառնալով ծխականների երկու թշնամական բանակի բաժանուելուն, իւր անհնազանդ ընաւորութեամբ զբաղեցրել է հոգևոր բարձր իշխանութիւնը իւր անդուսպ և անվայել արարքների քննութեամբ, և Սինոդի ու կոնսիստորիայի քանիցս նկատողութիւններն ու պատիժները չեն կարողացել նրան ուղիղ ճանապարհի բերել, հաստատելով Վրաստանի կոնսիստորիայի որոշումը, կարգալոյծ անել նրան և յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան կատարած մի շարք զեղծումների և կեղծիքների համար։ 16 յունիսի, թ. 292։

Սինոդը՝ քննութեան առնելով Աստրախանի կոնսիստորիայի նախկին ատենադպիր Յովհաննէս Մեղնիկեանի մեղադրական գործը, որոշեց. յանցաւոր գտնելով Յ. Մեղնիկեանին կոնսիստորիայի նախկին տարիների գործերից չ՝եղծուած մարկաներ իւրացնելու մէջ, յանձնել նրան մարմնաւոր իշխանութեան դատին պատժ. օրինաց 354 յօդ. 4 կէտի համաձայն։ 16 յունիսի, թ. 291։